

## ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԸ

Բ. Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, Ա. Ն. ԵԳԱՆՅԱՆ

Կապիտալ ներդրումները տնտեսության զարգացման հիմնական գործոն են, սակայն առայսօր չկա «կապիտալ ներդրումներ» կատեգորիայի համընդհանուր բնութագրություն գտած բնորոշում, թերի են պարզաբանված դրա տնտեսական բովանդակությունը, կազմը, կառուցվածքը: Իսկ դա նշանակում է, որ կապիտալ ներդրումների կազմում պլանավորվող, նախագծվող կամ հաշվառվող ծախսումների ցանկը որոշ պայմանականություն ունի, հաշվի չեն առնվում այնպիսի ծախսումներ, որոնք իրենց բնույթով կարող են ներդրումներ համարվել, կամ հակառակը, ընդգրկվում են այնպիսիք, որոնք փաստորեն կապիտալ ներդրումներ չեն: Հասկանալի է, որ նման անորոշությունը, առավել ևս, եթե այն հնարավոր չէ քանակապես գնահատել, անցանկալի է, իջեցնում է հաշվարկների ճշտությունը: Անհրաժեշտություն է զգացվում որոշակիացնել կապիտալ ներդրումների բովանդակության բացատրությունը, ձևավակերպել դրան համարժեք տնտեսագիտական բնորոշում, դրա հիման վրա ճշգրտել այն ծախսումների շրջանակը, որոնք իրենց բնույթով կարող են վերագրվել «կապիտալ ներդրումներ» կատեգորիային:

Խորհրդային տնտեսագիտական գրականությունում առաջարկված են կապիտալ ներդրումների բազմաթիվ բնորոշումներ, դրանց մեծ մասը ներդրումների հասկացությունը այս կամ այն կերպ կապում է հիմնական ֆոնդերի ստեղծման հետ, սակայն տարբեր հեղինակների կողմից այն միանշանակ չի բնորոշվում, նշվում են օբյեկտի տարբեր ընդգրկումներ (հիմնական ֆոնդեր, շրջանառու միջոցներ, գիտական հետազոտություններ, երկրաբանահետախուզական աշխատանքներ և այլն) կամ կիրառման տարբեր ոլորտներ (արտադրական, ոչ արտադրական): Կան նաև այլ տարբերություններ:

Արտասահմանյան տնտեսական գրականությունում «կապիտալ ներդրումների» փոխարեն օգտագործվում է «ինվեստիցիա» տերմինը, որի բնորոշումները, նույնպես բազմաթիվ և տարաբնույթ, նույնական չեն կապիտալ ներդրումների բնորոշումների հետ:

Ծախսումները՝ ունենան դրանք արտադրական թե ոչ արտադրական նըպատակ, կատարված լինեն անհատի, կոլեկտիվի թե հասարակության կողմից, ըստ դրանց օգտագործման բնույթի և ստացվող արդյունքի՝ կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբին պատկանում են այն ծախսումները (կամ դրանց բովանդակությունը կազմող նյութական և այլ արժեքները), որոնք կատարվում են միայն մեկ անգամ, ծառայում են միայն մեկ անգամ աշխատանք կատարելու համար, անմիջական արդյունք են տալիս մեկ անգամ, և իրենց լրիվ մեծությամբ, արժեքային արտահայտությամբ փոխանցվում են ստեղծված արդյունքի կամ մատուցված ծառայության արժեքին: Նույնանման նոր արդյունք ստանալու համար անհրաժեշտ է նորից նույն տիպի և քանակի ծախսումներ կատարել: Սրանք ընթացիկ ծախսումներ են: Այդ-

պիսիք են, օրինակ, հաստոց արտադրող ձեռնարկությունում կոմպլեկտավորող մասնիկների, նյութի, վառելիքի և էներգիայի ձեռքբերման, աշխատողների վարձատրման համար կատարվող ծախսումները, քանի որ դրանց յուրաքանչյուր միավորը օգտագործվում է միայն մեկ անգամ և արժեքային արտահայտութայամբ լիովին մտնում է արտադրվող սվյալ հաստոցի արժեքի մեջ:

Ի տարբերություն ընթացիկ ծախսումների, երկրորդ խմբի ծախսումները ապահովում են այնպիսի արդյունք, որն օգտագործվում է բազմակի անգամ, երկար ժամանակամիջոցի ընթացքում: Օրինակ, ձեռնարկությունը որոշ ծախսումներով ձեռք բերելով և տեղադրելով հաստոցը (կամ մի այլ հիմնական ֆունդ), արտադրութայան պրոցեսում այն օգտագործում է երկար ժամանակ, բազմակի անգամ, մինչև դրա շարքից դուրս գալը: Այդ ծախսումները կառվում են միանվագ, որոնք իրենց հիմնական հատկութայան՝ բազմակի և երկար ժամանակյա օգտագործման արդյունքներ ստեղծելու շնորհիվ հանդիսանում են կուտակված ծախսումներ:

Կապիտալ ներդրումները կամ ինվեստիցիաները, ինչպես հետևում է դրանց անվանումից, մասնակի դեֆինիցյաններից և գործնական կիրառումից, նպատակ ունեն ստեղծելու հենց բազմակի, երկար ժամանակ օգտագործվող արդյունքներ: Դա է այդ ծախսումների բնորոշ հատկությունը, որով դրանք ըստ էութայան համընկնում են միանվագ ծախսումների հետ և անջատվում այլ՝ ընթացիկ ծախսումներից: Այդ հատկությունն է, որ մեր կարծիքով, հիմք պետք է հանդիսանա կապիտալ ներդրումների տնտեսագիտական բնորոշման համար: Եթե դիտարկվում են արտադրական կապիտալ ներդրումներ, որոնց հետևանքը արտադրութայան միջոցների ստեղծումն է, ապա ենթադրվում է վերջինների մասնակցությունը մի շարք արտադրական պրոցեսների: Եթե գործ ունենք ոչ արտադրական կապիտալ ներդրումների հետ, ապա ենթադրվում է դրանց արդյունքի օգտագործումը բավականին երկար ժամանակահատվածի ընթացքում:

Սակայն, տարբեր արտադրական պրոցեսներ կարող են ունենալ նաև տարբեր տևողություն, և որոշակի ծառայութայան ժամկետ ունեցող աշխատամիջոցը մի որևէ արտադրությունում, որն ունի կարճ տևողութայան փուլ, կմասնակցի մի քանի արտադրական պրոցեսի, իսկ մի այլ, համեմատաբար ավելի երկար տևողություն ունեցող արտադրությունում կարող է մասնակցել ավելի քիչ, հավանական է նաև մեկից էլ պակաս արտադրական պրոցեսի: Այս պատճառով, նկատի ունենալով տարբեր արտադրական պրոցեսների խիստ տարբեր տևողությունը, նպատակահարմար ենք համարում արտադրական պրոցեսի փոխարեն օգտագործել արտադրական ժամանակամիջոց հասկացությունը և արտադրամիջոցների ու դրանց ծախսումների դասակարգումը կատարել ոչ թե մեկ կամ ավելի արտադրական պրոցեսի, այլ մեկ կամ ավելի արտադրական ժամանակամիջոցի ընթացքում դրանց օգտագործման սկզբունքից ելնելով: Նկատի ունենալով պլանավորման և հաշվառման նպատակով գործնականում օգտագործվող ժամանակի միավորը՝ տարին, որպես արտադրական ժամանակամիջոցի տևողություն կարելի է ընդունել մեկ տարին: Այստեղից, հետևաբար, կարելի է առաջարկել հետևյալ՝ ավելի ընդհանուր դեֆինիցիան. կապիտալ ներդրումներ կամ ինվեստիցիաները միանվագ ծախսումներ են, որոնց շնորհիվ ստացված արդյունքները այդ ծախսումները կատարողի (կամ նրա լիազորած այլ անձի) կողմից օգտագործվում են բազմակի անգամ և մեկ տարուց ավելի ժամանակի ընթացքում:

Մենք ամենևին հավակնություն չունենք առաջարկված ձևակերպումը բնութագրել որպես ամբողջական կամ լրիվ դեֆինիցիա, որը բնորոշում է

կապիտալ ներդրումներ կատեգորիայի ամբողջ էությունը կամ բացատրում դրանում ներառվող տնտեսական հարաբերությունները իրենց բազմազանությունով: Այն, իհարկե, մասնակի դեֆինիցիա է, սակայն հնարավորություն է ընձեռում որոշակիորեն սահմանազատել բոլոր այն ծախսումները, որոնք պետք է վերագրվեն կապիտալ ներդրումներին: Այս տեսանկյունից առաջարկված դեֆինիցիան գոյություն ունեցողների համեմատությամբ առավել ընդհանուր է: Այն ենթադրում է, որ կապիտալ ներդրումները բնութագրվում են ոչ թե ծախսումների, այլ դրանց արդյունքների բնույթով, կապիտալ ներդրում համարելով բոլոր այն ծախսումները, որոնք ստեղծում են բազմակի օգտագործման արդյունքներ, այսինքն՝ ռեսուրսներ: Սակայն, ներդրումներ են ոչ թե ռեսուրսները ինքնին, չնայած այդպիսի առաջարկություններ նույնպես հանդիպում են գրականության մեջ, այլ դրանց ստեղծմանն ուղղված ծախսումները: Այստեղից հետևում է, որ գոյություն ունեցող, այդ թվում նաև բնական ռեսուրսները, որոնց վրա տնօրինողի կողմից ծախսումներ չեն կատարված, կապիտալ ներդրումների մարմնացում չեն:

Առաջարկված դեֆինիցիան ընդհանուր է «կապիտալ ներդրումներ» և «ինվեստիցիաներ» հասկացությունների համար, որն ինքնին կարևոր է, քանի որ միասնականացնում է տնտեսագիտական գրականությունում օգտագործվող տերմինոլոգիան, հնարավորություն է ընձեռում նույն իմաստով օգտագործել երկու տերմիններն էլ: Տարբերվելով այլ, այդ թվում նաև «ինվեստիցիա» հասկացությունը բնութագրող դեֆինիցիաներից, առաջարկվածը չի բացառում կամ հակասում, այլ լրացնում ու ճշգրտում է դրանք, զգալիորեն ընդլայնելով այդ հասկացություններով ընդգրկվող ծախսումների շրջանակը, նաև ենթադրելով դրանց անսահմանափակ բաժանելի, այսինքն՝ կապիտալ ներդրում համարելով ոչ միայն ծախսումների ամբողջ գումարը, այլև դրա յուրաքանչյուր մասնիկը, անկախ ծախսելու ժամանակից: Հաշվի առնելով այս հանգամանքը, կարծում ենք, բացի լայնորեն օգտագործվող կապիտալ ներդրում և ինվեստիցիա տերմիններից, այդ ծախսումները բնութագրելու և անվանելու համար կարելի է օգտագործել նաև ավելի ընդհանուր «ներդրումներ» տերմինը:

Բազմակի օգտագործման արդյունքներ ստեղծելիս կապիտալ ներդրումները մեծամասամբ միջնորդվում են ընթացիկ ծախսումներով, ըստ որում, վերջինները որոշ դեպքերում հենց սկզբից ֆինանսավորվում են կապիտալ ներդրումների միջոցով, իսկ այլ դեպքերում՝ փոխհատուցվում են ավելի ուշ, երբ ներդրումների օբյեկտը արդեն պատրաստ է և միայն այդ վիճակով է իրացվում սպառողին: Օրինակ՝ գործարանում հաստոցներ թողարկելու համար կատարվում են աշխատանքային և նյութական ռեսուրսների ծախսումներ, որոնք չնայած ծառայում են բազմակի օգտագործման արտադրանք (հաստոց) ստեղծելու համար, ներդրումներ չեն, հաստոցների դիմաց վճարվող միջոցներն են միայն կապիտալ ներդրումներ:

Կապալառուական եղանակով շինարարություն իրագործելիս շատ հաճախ պատվիրատուն նախապես մասամբ կամ լրիվ ֆինանսավորում է շինարարական կազմակերպությանը, որն այդ միջոցների հաշվին նյութեր և կոնստրուկցիաներ ձեռք բերելու, շինմոնտաժային և այլ աշխատանքների վարձատրության և այլ նպատակներով ընթացիկ ծախսումներ է կատարում: Հետևաբար, կապիտալ ներդրումներն այս դեպքում միջնորդվում են շինարարական կազմակերպության ընթացիկ ծախսումներով:

Եթե վճարումը կատարվում է լրիվ ավարտված օբյեկտի համար, ապա շինմոնտաժային աշխատանքները ֆինանսավորվում են շինարարական կազմակերպության շրջանառու միջոցների հաշվին և մինչև պատվիրատուի կողմից օբյեկտի դիմաց վճարումը, շինարարության ծախսերը, ինչպես նախորդ

օրինակում հաստոցի արտադրութեան ծախսումները, չի կարելի մտցնել տրվ-  
յալ ժամանակաշրջանի կապիտալ ներդրումների մեջ: Շինարարական կազ-  
մակերպությունը ոչ թե կապիտալ ներդրումներ է կատարում, այլ, ինչպես  
և արդյունաբերական ձեռնարկությունները, արտադրական գործունեություն  
է իրագործում (շինմոնտաժային աշխատանքների տեսքով), որի հետևանքում  
ստացվում են պատրաստի օբյեկտներ: Կապիտալ ներդրումներ են այդ օբ-  
յեկտները ձեռքբերողների կողմից կատարվող վճարումները:

Ինչպես նշեցինք, կապիտալ ներդրումները կուտակման ծախսումներ են:  
Սակայն, հակառակ պնդումը, թե կուտակման ամեն մի ծախս կապիտալ  
ներդրում է, հիմնավոր չէ: Եթե դրանք չեն ստեղծում բազմակի օգտագործ-  
ման արդյունքներ, ինչպես օրինակ պետական ռեզերվների և պաշարների  
ավելացման ծախսումները, ապա դրանք կապիտալ ներդրում համարել չի  
կարելի:

Կապիտալ ներդրումներ հասկացությունն առնչվում է իր սուբյեկտի և  
օբյեկտի հետ: Սուբյեկտը կապիտալ ներդրումներ կատարողն է, և ինչպես  
հետևում է ներդրումների վերը առաջարկված բնորոշումից, ծախսումները  
ներդրում համարելու տեսանկյունից նշանակություն չունի սուբյեկտի դերում  
ով է հանդես գալիս՝ անհատը, կոլեկտիվը, թե հասարակությունը, պետական  
թե մասնավոր ձեռնարկությունը, ֆիզիկական թե իրավաբանական անձը:  
Կարևորն այն է, որ սուբյեկտի կողմից կատարվող ծախսումները նպատակ  
ունենան ստանալ բազմակի օգտագործման արդյունք:

Կապիտալ ներդրումների ուսումնասիրման տեսանկյունից ավելի կարև-  
որ է ներդրումների օբյեկտը, ուր ուղղվում են ներդրումները: Օբյեկտն է,  
որ հնարավորություն է տալիս դատելու դրանում կատարված ծախսումների  
բնույթի մասին: Եթե այն երկարժամանակյա օգտագործման համար է, ապա  
ծախսումները կապիտալ ներդրումներ են: Այսպես օրինակ, եթե ձեռք է բեր-  
վում էքսկավատոր, որը պետք է փորի և հեռացնի որոշակի քանակությամբ  
հողաշերտ շինարարության վայրում, ապա էքսկավատորի գինը կապիտալ  
ներդրում է շինարարական կազմակերպության համար: Իսկ եթե նույն նպա-  
տակի համար օգտագործվում է կենտրոնացված պայթյուն, որը մեկ անգա-  
մից նույն քանակի հողաշերտ է դուրս նետում, ապա դրա նախապատրաստ-  
ման ծախսումները, չնայած դրանք ապահովում են նույն արդյունքը, արդեն  
ոչ թե կապիտալ ներդրումներ են, այլ շինարարական կազմակերպության ըն-  
թացիկ ծախսեր: Օբյեկտի միջոցով կարելի է պարզել կապիտալ ներդրումների  
կառուցվածքը ըստ մի շարք հատկանիշների, ինչպես օրինակ, ըստ սեփա-  
կանության ձևի, արտադրական կամ ոչ արտադրական ոլորտի պատկանե-  
լիության, մոտակա թե հեռակա ժամանակաշրջանում իրականացվելու, շըր-  
ջապատի վրա թողնող աղդեցության (աղտոտող թե մաքրող) և այլն:

Այժմ, ելնելով վերը ձևակերպված բնորոշումից, փորձենք առանձնացնել  
այն ծախսումների շրջանակը, որոնք, ըստ մեզ, պետք է վերագրվեն կապի-  
տալ ներդրումներ (ինվեստիցիաներ, ներդրումներ) կատեգորիային: Ըստ ո-  
րում նկատի կունենանք նաև այն հանգամանքը, որ բնորոշման տեսական և  
գործնականում կիրառվող տարբերակները կարող են չհամընկնել: Տարբերու-  
թյունը կարող է թելադրված լինել զանազան նկատառումներով, այդ թվում  
պլանավորման ու հաշվառման աշխատանքների պարզեցում, ծախսումների  
կրճատում, միասնականության ապահովում, այլ բնորոշումների հետ համե-  
մատելիություն և այլն: Հնարավոր է, որ նշված նկատառումներով կապիտալ  
ներդրումների կազմից դուրս բերվեն այնպիսի ծախսումներ, որոնք ըստ դե-  
ֆինիցիայի կապիտալ ներդրումներ են: Այսպիսի շեղումները յուրաքանչյուր  
անգամ պետք է հիմնավորվեն գործնական նպատակահարմարությամբ, ար-

դարացվեն ձեռք բերվող արդյունքով և զգալի աղդեցություն շունենան հաշվարկների ճշտության վրա:

Ամենից առաջ հարկ է նշել Նիմնական ֆոնդերի ստեղծման ծախսումները: Քանի որ հիմնական ֆոնդերը այն միջոցներն են, որոնք օգտագործվում են բազմակի անգամ, մեկից ավելի արտադրական ժամանակամիջոցների ընթացքում, ապա դրանց ստեղծման կամ ձեռքբերման, ինչպես նաև վերարտադրության ծախսումները, անկախ միջոցների ֆինանսավորման աղբյուրից (սեփական, վարկ թե պետական անվերադարձ ֆինանսավորում), օբյեկտի նշանակումից (արտադրական թե ոչ արտադրական գործունեություն) և պատկանելիությունից, կապիտալ ներդրումներ են:

Շատ անգամ է քննարկվել այն հարցը, թե կապիտալ ներդրումներ են արդյոք Նիմնական ֆոնդերի կապիտալ նորոգման վրա կատարվող ծախսումները: Գործող կարգի համաձայն կապիտալ է համարվում մեքենաների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների, ինչպես նաև շինությունների ու կառուցվածքների այնպիսի նորոգումը, որն ունի մեկ տարուց ավելի երկար պարբերականություն: Այստեղից հետևում է, որ կապիտալ նորոգման ծախսումների արդյունքը օգտագործվում է մեկից ավելի տարիների ընթացքում, ուստի դրանք կարելի է համարել կապիտալ ներդրումներ: Սակայն յուրաքանչյուր կապիտալ (ինչպես նաև միջին) նորոգում ներառում է նաև հերթական ընթացիկ նորոգումը և զննման, խնամքի, ուղղումների և այլ աշխատանքներ, որոնք կատարվում են մեկ տարուց պակաս պարբերականությամբ, դրանց ծախսումները ընթացիկ են, ուստի ներդրումների մեջ հաշվի առնելու համար կապիտալ նորոգման արժեքը պետք է մաքրվի այդ ծախսումներից, ինչը մեթոդական ու գործնական զգալի դժվարությունների հետ է կապված: Այդ և մի շարք այլ դժվարություններից խուսափելու նպատակով այժմ, ըստ գործող կարգի, կապիտալ նորոգման ամբողջացիոն մասհանումներ շեն կատարվում, նորոգման լրիվ ծախսումները համարվում են ընթացիկ և հաշվի են առնվում արտադրանքի ինքնարժեքում: Կարծում ենք՝ այս մոտեցումը գործնական նկատառումներով հիմնավոր է, և շնայած որ կապիտալ նորոգման ծախսումները իրենց հիմնական մասով կապիտալ ներդրումներ են, նպատակահարմար չէ դրանք հաշվառել ներդրումների կազմում:

Սակայն կարծում ենք, այլ մոտեցում պետք է ցուցաբերել խոշոր շենքերին և կառուցվածքներին, որոնց կյանքի նորմալ տևողությունը անհամեմատ ավելի է, քան մեքենաներինը և սարքավորմանը, դրանց կապիտալ նորոգումը իրականացվում է հաճախ տասնամյակների հասնող պարբերականությամբ, տևում է երկար, պահանջում է, օբյեկտի սկզբնական արժեքի հետ համադրելի ծախսեր, որպես կանոն զուգակցվում է օբյեկտի նորացման, հաճախ նաև վերակառուցման ու ընդլայնման աշխատանքներով: Այդ ծախսումները ավելանում են շենքերի ու կառուցվածքների բալանսային արժեքի վրա, հաղորդում են դրանց նոր որակ, որը պահպանվում և օգտագործվում է երկար տարիներ, առնվազն մինչև նոր կապիտալ նորոգումը: Համարել դրանք ընթացիկ ծախսումներ ոչ միայն հիմնավոր չէ տեսականորեն, այլև աննպատակահարմար է գործնականորեն, քանի որ մի շարք տարիների համար կատարված ծախսումները վերագրելով մեկ տարվա զգալիորեն աղավաղվում են տվյալ, ինչպես և հաջորդող տարիների տնտեսական գործունեության արդյունքները և զնահատականը: Այս տեսակետից, ինչպես նաև ելնելով այդ ծախսումների բնույթից, որպես երկարժամանակյա օգտագործման արդյունքներ ստեղծող, հիմնավոր է շենքերի ու կառուցվածքների կապիտալ նորոգման ծախսումները հաշվառել, պլանավորել և ֆինանսավորել կապիտալ ներդրումների կազմում:

Հիմնական ֆոնդերի նպատակային մոդեռնացումը կամ վերակառուցումը, եթե այն փոքր չէ, այսինքն՝ հաճախակի չի կատարվում և ունի զգալի ծավալ, սարքավորմանը տալիս է նոր որակ, համապատասխանեցնում է ժամանակի պահանջներին, փոխում է սպառարժեքն ու արժեքը, որոնք դառնում են սարքավորման նոր բնութագրեր մի շարք տարիների համար՝ մինչև հաջորդ մոդեռնացումը և դեռ ավելի, այսինքն՝ կատարված ծախսումների արդյունքը բազմակի օգտագործման է, որով և մոդեռնացման ծախսերը դառնում են կապիտալ ներդրումներ: Եթե այդպիսի մոդեռնացման հետ միաժամանակ կատարվում է նաև սարքավորման կապիտալ նորոգում, ապա դրա ծախսումները, որոնք հանդես են գալիս մոդեռնացման ծախսերի հետ միացյալ, նույնպես պետք է վերագրվեն կապիտալ ներդրումներին, քանի որ այս գեպքում վերը նշված դժվարություններն արդեն համարյա վերանում են:

Նույն ձևով անվերապահորեն կապիտալ ներդրումներին պետք է վերագրվեն ձեռնարկությունների (արտադրական կամ ոչ արտադրական սլոթերի) վերակառուցման, տեխնիկական վերազինման, ընդլայնման, վերափոխման (կոնվերսիա) նպատակով կատարվող ծախսումները որպես հիմնական ֆոնդերի վերարտադրության կաբուրագույն ուղղություններ:

Դիտարկենք ձեռնարկության շրջանառու միջոցները՝ շրջանառու ֆոնդերի և շրջանառության ֆոնդերի միազումարը, որոնք իրենց անընդհատ շրջապտույտի մեջ ապահովում են արդյունքի արտադրության և իրացման գործընթացների անընդհատությունը: Այդ շրջապտույտը արտահայտում է շրջանառու միջոցների տարրերի սպառման պրոցեսը: Իսկապես, որևէ տարր, օրինակ հումքը, մատակարարվելուց հետո մտնելով շրջանառու միջոցների կազմը, անցնում է մի շարք ձեռնարկություններ, հանդես գալով նախ պաշարի ձևով, ապա որպես աշխատանքի առարկա, անավարտ արտադրանքի մաս, հետո իրացվում է արդեն պատրաստի արտադրանքի կազմում: Այն մասնակցում է մեկ ցիկլի, օգտագործվում է մեկ անգամ ինչպես արժեքային, այնպես էլ նյութական արտահայտություն և փոխանցվում է արտադրանքի արժեքին ամբողջովին: Այս տեսակետից շրջանառու միջոցների տարրերի սպառումը կամ դրանց վերականգնելու համար կատարվող նույն ծավալով ծախսումները ընթացիկ են: Սակայն, կա հարցի նաև այլ կողմը:

Յուրաքանչյուր ակնթարթում շրջանառու միջոցների տարրեր տարրերը գտնվում են շրջապտույտի որոշակի օղակում, որոշակի վիճակում և աստիճանաբար շարժվում են դեպի հաջորդ օղակը և վիճակը, իրենց տեղը զիջելով նախորդ վիճակից եկող տարրերին: Այսպիսով, արտադրության և շրջանառության ամբողջ ընթացքում շրջանառու միջոցները առկա են, շնայած նրանց նյութական կազմը անընդհատ շարժման մեջ է, հումքը, նյութերը և այլ միջոցները աստիճանաբար ծախսվելով փոխարինվում են նույնատիպ այլ միջոցներով, բայց արժեքային արտահայտություն և արտադրության նույն ծրագրի դեպքում, շրջանառու միջոցները միջին հաշվով մնում են անփոփոխ և ամբացված են տվյալ արտադրությանը այնպես, ինչպես և հիմնական ֆոնդերը:

Առանց շրջանառու միջոցների մշտական առկայության՝ չէր լինի արտադրության անընդհատություն, այսինքն՝ վերարտադրություն, ուստի բացի շրջանառու միջոցների սպառումից, որն արտահայտվում է դրանց շրջապտույտի ձևով, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այդ միջոցների ստեղծման համար անհրաժեշտ ծախսումները կամ ավանսավորված միջոցները, որոնք մշտապես ամրակցվում են տվյալ արտադրությանը՝ դրա անընդհատությունը ապահովելու համար:

Այսպիսով, արտադրության ամբողջ պրոցեսում, արտադրական բոլոր

ժամանակամիջոցներում շրջանառու միջոցները առկա են իրենց լրիվ ծավալով, մշտապես ամրակցված են տվյալ արտադրությանը, դրա անբաժանելի մասը և անընդհատության նախապայմանն են կազմում: Հետևաբար, այդ միջոցները օգտագործվում են բազմակի անգամ, շատ արտադրական ժամանակամիջոցներում, ուստի դրանց ստեղծման ծախսումները կապիտալ ներդրումներ են (ինվեստիցիաներ են): Եթե արտադրության ծրագրի կամ ուղղության փոփոխության հետևանքով անհրաժեշտություն է զգացվում ավելացնել շրջանառու միջոցների ծավալը, ապա այդ նպատակով կատարվող ծախսումները նույնպես կապիտալ ներդրումներ են: Իսկ եթե որևէ միջոցառման հետևանքով շրջանառու միջոցների ծավալը կրճատվում է, ապա ազատված միջոցները պետք է դիտել որպես կապիտալ ներդրումների խնայողություն:

Այս տեսակետից չի կարելի համաձայնվել տնտեսագիտական գրականության մեջ շրջանառու ֆոնդերին տրվող բացատրության հետ, ըստ որի դրանք, ի հակադրություն հիմնական ֆոնդերի, բնութագրվում են որպես արտադրական միայն մեկ փուլում ամբողջությամբ սպառվող և իրենց լրիվ արժեքը արտադրանքին փոխանցող միջոցներ: Այսպիսի բացատրությունը ընդունելի է այդ ֆոնդերի միայն կոնկրետ նյութական բաղադրիչների համար, իսկ շրջանառու ֆոնդերը ամբողջությամբ, որպես այդ բաղադրիչների արժեքների հանրագումար և ավանսավորված միջոցներ, արժեքային արտահայտությամբ մշտապես առկա են, հետևաբար և մասնակցում են արտադրության բոլոր փուլերում: Այս տեսակետից հիմնական և շրջանառու ֆոնդերի միջև տարբերություն չկա:

Քննարկենք կադրերի պատրաստումը, ներառյալ դրա տարբեր փուլերը՝ կրթությունը, մասնագիտության ձեռքբերումը, բազմակի վերապատրաստումը, գիտական որակավորումը և այլն: Ինչպիսին է այդ ծախսումների բնույթը: Արդյունքը որակավորումն է, որը դառնում է աշխատուժի բնութագիր և ծառայում է երկարատև ու բազմակի օգտագործման համար: Այս տեսակետից կրթության ծախսումները միանվագ են, ըստ որում, կարելի է տարբերակել հետևյալ դեպքերը:

Ընդհանուր կրթության հոգսը հասարակությունը վերցրել է իր վրա, արդյունքը դառնում է կրթություն ստացողի սեփականությունը, վաճառվում է գործատիրոջը ոչ որպես ռեսուրս, այլ աշխատանք՝ որոշակի ժամանակի ընթացքում կամ նախատեսված գործողություններ կատարելու համար: Այստեղից հետևում է, որ պետությունը անմիջականորեն չի օգտագործում իր ծախսումներով ստեղծված ռեսուրսը, սեփականատերը ծախսումներ չի կատարում ռեսուրսը ստեղծելու ընթացքում (չհաշված սեփական աշխատանքը գիտելիքներ ձեռք բերելու համար): Օգտագործողը (գործատերը) վճարում է ոչ թե ռեսուրսի, այլ դրա օգտագործման համար: Ոչ մի օղակում կապիտալ ներդրումների սուբյեկտն ու օբյեկտը համատեղ հանդես չեն գալիս, ուստիև հնարավոր չէ կրթության վրա կատարված ծախսումները կապիտալ ներդրում համարել, չնայած իրենց բնույթով դրանք համապատասխանում են ներդրումների հասկացությանը:

Ավելի որոշակի են ձեռնարկության կատարած ծախսումները կադրերի պատրաստման ու վերապատրաստման վրա, երբ դրանք ունեն կոնկրետ ուղ-

<sup>1</sup> Լրիվ ծավալի առկայությունը նկատի ունենք միայն միջին հաշվով, որոշակի ծամանակամիջոցի ընթացքում, քանի որ նյութատեխնիկական մատակարարման և պատրաստի արդյունքի իրացման պարբերական բնույթի և որոշ անհամաչափության պատճառով ՌՁարավոր են և իրականում էլ տեղի ունեն շրջանառու միջոցների առկա ծավալների որոշակի տատանումներ ժամանակի ընթացքում: Գույնիսկ արտադրության Գույն ծրագրի դեպքում:

դուժյուն և արդյունքը՝ որակավորման բարձրացումը, ենթադրվում է օգտագործել հենց ձեռնարկութունում: Այդ է պատճառը, որ նոր ձեռնարկութուն ստեղծելիս կապիտալ ներդրումների կազմում ներառվում են կադրերի պատրաստման ծախսումները: Սակայն, այս դեպքում նման ծախսումների արդյունքը՝ ոչ որակավորումը և ոչ էլ դրա կրողը (աշխատուժը), չեն դառնում ձեռնարկության սեփականությունը, ցանկացած ժամանակ կարող են դուրս գալ օգտագործումից, հարց կառաջանա դրանց փոխարինել նորերով (ինչպես փոխարինվում են շարքից դուրս եկած հիմնական ֆոնդերը), որոնց ներգրավման ծախսումները, ըստ գործող կարգի, կապիտալ ներդրումներ չեն: Այս առումով, ինչպես նաև գործնական նկատառումներից ելնելով, նըշված ծախսումները կապիտալ ներդրումների կազմում ներառելը նպատակահարմար չէ:

Քննարկենք նաև այն դեպքը, երբ կրթութուն ստացողն ինքն է կատարում ծախսումները, դառնում է արդյունքի (որակավորման) սեփականատերը, բազմակի անգամ (երկար ժամանակի ընթացքում) օգտագործում է այն, և կարծես բոլոր կողմերից այս ծախսումները կապիտալ ներդրումներ են, անհատի ներդրումները իր վրա բարձր որակավորում ձեռք բերելու և հետագայում դրա արդյունքները բազմակի ստանալու նպատակով: Սակայն, այս դեպքում, ինչպես և կադրերի պատրաստման այլ ձևերում ու փուլերում, այս կապիտալ ներդրումները միջնորդվում են կրթության ամբողջ ժամանակամիջոցում կատարվող ընթացիկ ծախսումներով (ինչպես, օրինակ, նույն բնույթի ունեցող սենդի և այլ ծախսումները երեսայի աճի և աշխատուժի դարձնելու ընթացքում), և գործնականորեն ձեռնառու չէ գրանք հաշվառել որպես կապիտալ ներդրումներ:

Արտադրության ռեսուրսների կազմում այժմ կարևորվում են ոչ նյութական, առավելապես ինֆորմացիոն (այդ թվում գիտատեխնիկական) ռեսուրսները, տեխնոլոգիան, արտադրության կազմակերպման ու կառավարման մեթոդներն ու ձևերը՝ գյուտերի, հայտնագործությունների, մշակումների, նոու-հաուի, ինչպես նաև գործունեության լիցենզիաները: Դրանք ձեռք են բերվում ձեռնարկության միջոցներով և քանի որ բազմակի կամ երկարատև օգտագործման են, ապա դրանց վրա կատարված ծախսումները իրենց բնույթով ու էությունով կապիտալ ներդրումներ են, այսինքն՝ վերջինների շրջանակը չի սահմանափակվում միայն նյութական ռեսուրսներով, այն ընդգրկում է նաև ոչ նյութական բարիքների ձեռքբերումը, եթե դրանք սեփականատիրոջ մոտ ծառայում են բազմակի անգամ կամ երկար ժամանակի ընթացքում: Որոշ պարզաբանման կարիք ունեն այդպիսի բարիք-ռեսուրսների ստեղծման ծախսումները: Եթե բարիքը ստեղծվում է իրացնելու նպատակով, որպես ապրանք, ապա դրա ծախսումները, ինչպես ամեն մի արտադրության ժամանակ կատարվող ծախսերը, ընթացիկ են: Եթե ռեսուրսը ստեղծվում է սեփական բազմակի օգտագործման համար, ինչպես օրինակ, հաստոցաշինական գործարանում արտադրված և այդտեղ էլ տեղադրված հաստոցը, ապա դրա վրա կատարված ծախսումները սպառողի համար, որն այս դեպքում միաժամանակ նաև արտադրողն է, դառնում են կապիտալ ներդրումներ, որոնք միջնորդվում են արտադրության ընթացիկ ծախսումներով: Տարբերությունն այն է, որ արտադրող սեփականատերը երևի ինքն իրենից շահույթի գումարը չի վերցնի, այսինքն՝ կապիտալ ներդրումների ծավալը կհաշվարկի ռեսուրսի ինքնարժեքով: Ներդրումների նշված միջնորդավորվածությունը հաճախ առիթ է դառնում, որ սեփական արտադրության ռեսուրսների, ինչպես օրինակ, գիտական ինֆորմացիայի ստեղծման ծախսումները, կապիտալ ներդրումներ չհամարվեն: Կարծում ենք, դա տեսականորեն սխալ է և չունի նպ



գործնական հիմնավորում: Չէ որ օբյեկտի շինարարության ծախսումները պատվիրատուի համար կապիտալ ներդրումներ են նաև այն դեպքում, երբ նա այդ աշխատանքների համար վճարում է շինարարության ընթացքում, ըստ պատրաստության աստիճանի, այսինքն՝ վճարում է կառուցման ընթացիկ ծախսումները: Նույն ձևով կապիտալ ներդրումներ են շինարարական կազմակերպության կողմից իր համար ստեղծվող այն շենքերի ու կառուցվածքների ծախսումները, որոնք որպես հիմնական ֆոնդեր ծառայելու են պատվիրած օբյեկտների շինարարության համար:

Փոքր-ինչ այլ է գիտական հետազոտությունների համար կատարվող ծախսումների բնույթը: Դրանց արդյունքները, որպես գիտական ինֆորմացիա, երկարատև գործածության պոտենցիալ են ներկայացնում, որի ձեռքբերման ծախսումները, ինչպես նաև որպես պատվեր վճարված գումարները, անկասկած կապիտալ ներդրումներ են և հիմնականում հենց այդպես էլ դիտվում են պրակտիկայում: Սակայն, արտադրական ձեռնարկության կազմում գործող գիտական օղակի ծախսումները, անտեսելով դրանց արդյունքների բազմակի օգտագործման բնույթը, հաշվառվում են ոչ որպես կապիտալ ներդրումներ, այլ ընթացիկ ծախսեր: Չուտ գործնական նպատակահարմարությունից ելնելով, ըստ երևույթին կարելի է համաձայնել նաև այդպիսի, թեկուզ տեսական հիմնավորում չունեցող մոտեցմանը: Չէ որ հազիվ թե իմաստ ունի պետությունների կազմում կապիտալ ներդրումներ համարել գիտական, առավել և հիմնարար հետազոտություններ կատարող կազմակերպությունների տարեկան ֆինանսավորման գումարները, չնայած որ ըստ բնույթի դրանց արդյունքները երկարատև օգտագործման են:

Ըստ ընդունված բնորոշումների՝ ինվեստիցիաներ են դրամական կապիտալի ստեղծման բոլոր ծախսումները, այդ թվում՝ բանկային հիմնադիր ֆոնդի ստեղծման, բաժնետոմսեր, արժեթղթեր, պարտատոմսեր և պարտավորազրեեր, չեկեր զնելու, բանկային ավանդներ ունենալու համար արված ծախսումները, որոնք կապիտալ ներդրումներ են նաև, քանի որ, նախ, դրանց հետևանքով ձեռքբերվածը կամ ստեղծվածը երկարատև կամ բազմակի օգտագործման արդյունք է, և բացի այդ, ընդունել էինք «ինվեստիցիա» և «կապիտալ ներդրումներ» հասկացությունների նույնությունը, այսինքն՝ այն ամենը, ինչը հիմնավոր կերպով համարվում է ինվեստիցիա, ընդգրկված է նաև կապիտալ ներդրումներ հասկացությամբ: Չնայած շատ պնդումների, զանձը կապիտալ ներդրում չէ, այն պահուստ է և ոչ բազմակի կամ երկարատև օգտագործման ռեսուրս: Նույն ձևով ֆինանսական սպեկուլյացիայի նպատակով բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերման ծախսումները կապիտալ ներդրում չեն, քանի որ դրանց արդյունքը վաճառվում է կարճ ժամանակում կամ մեկ անգամ: Վարկը նույնպես վարկատուի (բանկ կամ այլ անձ) համար կապիտալ ներդրում չէ, չնայած հիմնականում վարկ վերցնողի կողմից օգտագործվում է որպես այդպիսին:

Որքը հեղինակներ առաջարկում են կապիտալ ներդրում համարել երկրաբանտեղեկատվական աշխատանքների վրա կատարվող ծախսումները: Կարծում ենք, այդ առաջարկությունը հիմնավոր է միայն կոնկրետ հանքավայրի համար կատարվող այդպիսի աշխատանքների վերաբերյալ, որոնց շնորհիվ բացահայտվում են երկարատև օգտագործման նոր պաշարներ: Այդ ծախսումները, ըստ այժմ գործող կարգի, հաշվառվում են կապիտալ ներդրումների կազմում: Մակայն, ընդհանուր հանքարոնողական աշխատանքները, որոնք որպես կանոն կատարվում են պետությունների հաշվին և երկարատև օգտագործման կոնկրետ օբյեկտ չեն ստեղծում, նպատակահարմար չէ կապիտալ ներդրում համարել, չնայած դրանց նպատակը հենց հանքավայրերի

հայտնաբերումն է: Այստեղ նորից առաջանում է ժախտողի և օգտագործողի, ինչպես նաև օրյեկտի ու սուբյեկտի փոխհարաբերությունների լիարժեքության հարցը:

Խորհրդային տնտեսագիտական գրականությունում, վիճակագրության և պլանավորման պրակտիկայում բնակչության կապիտալ ներդրումներ են համարվել միայն սեփական բնակարաններ կառուցելու ծախսումները: Իսկ նույնիսկ ենթադրել, որ այս կատեգորիայի տակ հասկացվել է միայն անձնական սպառման համար կապիտալ ներդրումները, միևնույնն է, գործող կարգը խիստ նեղացրել է դրանց շրջանակը: Սեփականության ձևը նշանակություն չունի ծախսումների այս կամ այն տեսակը կապիտալ ներդրումներ համարելու համար: Մեր կողմից առաջարկված բնորոշումով կապիտալ ներդրումներ պետք է համարվեն բնակչության բոլոր այն ծախսումները, որոնց հետևանքով ստեղծվում կամ ձեռք են բերվում երկարատև կամ բազմաչֆ օգտագործման արդյունքներ: Դրանք բազմաթիվ և բազմաբնույթ են, եթե նույնիսկ բացառել արտագրության կամ բժշկեսի այլ անսահման զբաղվելու նպատակով կատարվող ծախսումները: Առաջին հերթին այդպիսի արդյունքներին պետք է վերաբերել, թհարկե, բնակարանը՝ իր սպասարկող կառույցներով, ինչպես նաև՝ ավտոանակը, կահույքը, հողի (տնամերձ, այգի) վրա կապիտալ աշխատանքները, գյուղատնտեսական աշխատանքի միջոցները, տնային կամ անձնական երկարատև օգտագործման իրքերը (ավտոմեքենա, լվացքի, կարի, մաքրող և այլ մեքենաներ, քաղթև և հեռուստատեսության սարքեր ու կայանքներ, արդուզարդի և հիգիենայի ու շատ ուրիշ իրեր, ընդհուպ մինչև սպասքեղներ: Առանձնացնելու համար այս ծախսումները մյուսներից, անվանենք դրանք բնակչության կենցաղային կամ ունեցվածքային կապիտալ ներդրումներ:

Այնուհետև բնակչության կապիտալ ներդրումներ են բաժնետոմսեր, արժեթղթեր, պարտատոմսեր և այլ փաստաթղթային արժեքներ գնելու, բանկերում երկարատև ավանդներ բացելու ծախսումները, որոնք նրանց տարեկան որոշակի շահույթ են սպասեցնում դիվիդենտի կամ տոկոսի ձևով, դրանով իսկ դառնալով բազմակի օգտագործման արդյունքներ ստեղծող ներդրումներ: Այսպիսով, բնակչության կապիտալ ներդրումների կազմը պետք է մեծ չափով ընդլայնվի, կիրառելով այն պլանավորման ու հաշվառման պրակտիկայում, հաշվի առած, իհարկե, որոշ արժեքային սահմանափակումներ:

Իսկ ինչպիսի՞ն է բարեգործական նպատակներով կատարվող ծախսումների բնույթը: Եթե ծախսում կատարողը զրկվում է դրանց միջոցով ստեղծված արդյունքից, ուրեմն այդ ծախսումները կապիտալ ներդրումներ չեն իր համար, նույնիսկ այն դեպքում, եթե այդ արդյունքը բազմակի օգտագործման է, ինչպես օրինակ, բարեգործական հիմնադրամները, նույն ձևով ներդրումներ չեն պարզևատրումները, նվիրատվությունները, ժառանգությունները և այլն: Սակայն, ստացողների համար դրանք կարող են կապիտալ դառնալ, այսինքն՝ տեղի ունի ոչ թե կապիտալի ստեղծում (կուտակում), այլ սեփականատիրոջ փոփոխություն՝ առանց ներդրումների (ինվեստիցիաների): Հնարավոր են նաև բարեգործական կապիտալ ներդրումներ, օրինակ, հիվանդանոցի կառուցումը Սպիտակում արտասահմանյան բարեգործների կողմից, և ապա միայն դրա նվիրաբերումը Հայաստանին: Այս դեպքում ստեղծման ծախսումները բարեգործների կապիտալ ներդրումներ են, իսկ հանձնումը՝ սեփականատիրոջ փոփոխություն: Կամ բարեգործական հիմնադրամի ստեղծումը առանց հրաժարվելու դրա նկատմամբ սեփականության իրավունքից (օրինակ Ֆորդի կամ Գյուլյահնկյանի հիմնադրամները):

Եվ, վերջապես, արվեստի գործերի ստեղծման կամ ձեռքբերման ծախ-

սումները: Եթե դա կոնկրետ օբյեկտի ստեղծման բաղադրիչն է, ինչպես օրինակ Սիկերիուսի կամ Մինաս Ավետիսյանի որմնանկարները շենքերի կամ ձեռնարկությունների պատերին, ապա դրանց վրա ծախսումները կապիտալ ներդրումներ են օբյեկտի սեփականատիրոջ համար և մասն են իր կապիտալի: Արվեստի գործը ձեռքբերողի ծախսումները ներդրումներ են, եթե այն դառնում է բազմակի կամ երկարատև օգտագործման առարկա, օրինակ՝ թանգարանի ցուցանմուշ կամ նույնիսկ բնակարանի զարդ: Որպես գանձ ձեռքբերված գործը, օրինակ, բանկում պահված կտավը, ինչպես և ցանկացած գանձ, բազմակի օգտագործման առարկա չէ, ուստի և դրանց ձեռքբերման ծախսումները ներդրումներ չեն:

Այսպիսով, վերը կատարված քննարկությամբ պարզեցինք կապիտալ ներդրումներին վերագրվող ծախսումների ցանկը՝ հաշվի առնելով ինչպես ներդրումների տնտեսական բովանդակությանը դրանց համապատասխանությունը, այնպես նաև մասամբ հաշվառման ու պլանավորման գործնական նկատառումները: Դա հնարավորություն է ընձեռում ճշտորեն սահմանազատել այն բոլոր օբյեկտները և ոլորտները, որոնցում արդյունավետության կարեւորագույն գործոն են դառնում կապիտալ ներդրումները, ուստի և վերջինների արդյունավետությանը պետք է առավելագույն ուշադրություն նվիրվի: Սակայն, կապիտալ ներդրումների որոշման այստեղ ընդունված ընդհանուր սկզբունքը զգալի շափով ընդլայնում է ներդրումների շրջանակը, դժվարացնելով հաշվարկները, հատկապես երկարատև օգտագործման այնպիսի ցածրարժեք միջոցների համար, որոնց քանակը մեծ է, տեսակները՝ շատ, ինֆորմացիան՝ անբավարար (օրինակ, ցածրարժեք գործիքներ, հարմարանքներ, սարքեր, գյուղատնտեսական ու տնային իրեր, նույնիսկ հագուստ): Առաջարկված բնորոշման և վերը ստացված եզրակացությունների օգտագործման գործնական նկատառումներով, ըստ երևույթին, նպատակահարմար կլինի որոշ արժեքային սահմանափակում նախատեսել այդպիսի ծախսումները կապիտալ ներդրումներին վերագրելու համար, այսինքն՝ սահմանել մի այնպիսի մեծություն, որից բարձր լինելու դեպքում միայն երկարաժամանակյա օգտագործման արդյունքների համար կատարվող ծախսումները կարելի է վերագրել կապիտալ ներդրումներին: Որպես առաջին մոտեցում այդ սահմանը կարելի է որոշել, ելնելով այն բանից, որ դրա օդնությամբ կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալից հանվի դրա 5—10 տոկոսից ոչ ավելին (տնտեսագիտական հաշվարկներում ընդունելի սխալի շափով), որը, կարծում ենք, զգալի կհեշտացնի ներդրումների հաշվառման ու պլանավորման գործընթացը:

**Б. О. ЕГИАЗАРЯН, А. Н. ЕГАНЯН** — Понятие и состав капитальных вложений. — Признавая тождество понятий «капитальные вложения» и «инвестиции» и отмечая отсутствие общепринятого объяснения их экономической сущности, авторы статьи предлагают дефиницию, в которой они определяются как затраты накопления, результаты которых служат для многократного и долговременного использования. На основе этой дефиниции уточняется перечень видов затрат, которые по своему содержанию могут быть отнесены к категории капитальные вложения (инвестиции). Выделяются виды затрат накопления, которые по практическим соображениям не целесообразно планировать и учитывать как капитальные вложения (инвестиции). С этой же точки зрения, для облегчения и сокращения объема расчетных работ, предлагается установить стоимостное ограничение (определенную сумму), при превышении которого затраты накопления могут быть отнесены к капитальным вложениям (инвестициям).